ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆ

«08» 07 2025 թ. Թիվ 169-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԹԻՎ 73-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2021 թվականի հուլիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին» թիվ 73-Լ հրամանի N 2 հավելվածի 6-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 2-րդ ենթակետի աղյուսակի 2-րդ կետում «1» թիվը փոխարինել «2» թվով, իսկ 4-րդ կետում «3» թիվը՝ «2» թվով.

2) 3-րդ ենթակետի աղյուսակի 2-րդ կետում «1» թիվը փոխարինել «2» թվով, իսկ 5-րդ կետում «5» թիվը՝ «4» թվով.

3) 4-րդ ենթակետի աղյուսակի 2-րդ կետում «1» թիվը փոխարինել «2» թվով, իսկ 4-րդ կետում «4» թիվը՝ «3» թվով.

4) 6-րդ ենթակետի աղյուսակի 2-րդ կետում «1» թիվը փոխարինել «2» թվով, իսկ 4-րդ կետում «6» թիվը՝ «5» թվով:

2. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, խորհրդականներին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին:

Ա. ՊՈՂՈՍՅԱՆ